 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 1/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

«Ամերիաբանկ» ՓԲԸ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ (374 10) 56 11 11
Էլ. հասցե՝ office@ameriabank.am;
Կայք՝ www.ameriabank.am

«Ամերիաբանկ» ՓԲԸ բրոքերային ծառայությունների շրջանակում իրականացնում է հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում:

Բրոքերային ծառայությունների շրջանակներում հնարավորություն է ընձեռնվում գործարքներ իրականացնել հետևյալ գործիքներով՝ բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պարտատոմսեր, ֆյուչերսներ, օպցիոններ, արտարժույթային գործարքներ:

Բրոքերային ծառայությունների մատուցումը իրականացվում է «Ամերիաբանկ» ՓԲԸ, այսուհետ Բրոքեր, և հաճախորդի միջև կնքված Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

Ընդ որում, Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի ձևերը համապատասխանաբար տարբերվում են Ֆիզիկական անձանց, Իրավաբանական անձանց և Ֆինանսական կազմակերպությունների դեպքում:

Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակներին և ամբողջական պայմաններին կարելի է ծանոթանալ զանգահարելով +37410561111 հեռախոսահամարով կամ այցելելով Ամերիաբանկի պաշտոնական ինտերնետային կայքը (www.ameriabank.am)

Բրոքերային ծառայություններից օգտվելիս Հաճախորդը պետք է Բրոքերին ներկայացնի Բրոքերի կողմից սահմանված արժեթղթերի հաշվի բացման և Բրոքերի կողմից ամբողջ պայմանագրով նախատեսված այլ պահառուական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Ելնելով կոնկրետ իրավիճակից հաճախորդից կարող է պահանջվել նաև լրացուցիչ փաստաթղթեր, որոնք չեն նշվել նախապես: Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի հետ կարող եք ծանոթանալ Ամերիաբանկի կայքում:



**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Խմբագրություն 1

Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից


Գործարք կնքելու համար Հաճախորդը Բրոքերին է ներկայացնում Հանձնարարական, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Հաճախորդի միջոցներով Գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ բանկի բրոքերային ծառայությունների սահմանված Հանձնարարականի ձևին համապատասխան լրացված թղթային, ինչպես նաև Գործարքի էական պայմանները պարունակող՝ էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, ֆաքսով փոխանցված կամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Հանձնարարականները:

Բրոքերը էլեկտրոնային փոստի միջոցով և/կամ Հաճախորդի գրավոր պահանջի/պայմանավորվածության դեպքում՝ թղթային ձևով՝ Բրոքերի գլխամասային գրասենյակում Հաճախորդին ներկայացնում է ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) և պարբերական ամսեկան հաշվետվություններ՝ Հաճախորդի հաշվի սկզբնական մնացորդի (դիրքի), շարժի և վերջնական մնացորդի (դիրքի), ինչպես նաև Հաճախորդի հաշվում արտացոլված ակտիվներով (դրամական միջոցներ և արժեթղթեր) գործարքների և ակտիվների շարժերի վերաբերյալ՝ ամսեկան մեկ անգամ, բացառությամբ էլեկտրոնային Առևտրային համակարգի միջոցով կնքվող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների, որոնք ներկայացվում են համակարգի միջոցով՝ հաճախորդի համաձայնության դեպքում:

Բրոքերը Հաճախորդին հաշվետվությունները առաքում է՝

- Ամսական հաշվետվությունը մինչև հաշվետու ամսին հաջորդող ամսվա 15-ը
- ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) հաշվետվությունը՝ մինչև գործարքի կնքմանը հաջորդող Գործառնական օրվա ավարտը, բացառությամբ Առևտրային համակարգի միջոցով ստացվող հաշվետվությունների, որոնք կարող են տրամադրվել ավելի ուշ (սակայն առաջին իսկ հնարավորության դեպքում)՝ համակարգի խափանման կամ պայմանների փոփոխման արդյունքում:

Բրոքերը Հաճախորդին հաշվետվություն առաքում է նաև ըստ Հաճախորդի պահանջի՝ դրանում նշված ժամանակահատվածի կտրվածքով՝ այդպիսի պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում: Հաշվետվությունների տրամադրումը կատարվում է ըստ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սակագների:

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 3/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

Բրոքերը հաճախորդից գանձում է պարգևավճար ըստ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Բրոքերային ծառայությունների մատուցման սակագների (Սակագներ), որոնց կարող էք ծանոթանալ trading.ameriabank.am կայքում:

Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Բրոքերի կողմից և ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու կամ Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվան հաջորդող 11-րդ օրը:

Հաճախորդի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում Բրոքերը մատնանշում է այն աղբյուրները, որոնցից կարելի է տեղեկություններ ստանալ միջնորդավճարների վերաբերյալ:

Բրոքերի և հաճախորդի միջև տեղեկատվությունը կարող է փոխանակվել միայն տեղեկատվության փոխանցման կապի հուսալի միջոցներով: Կապի հուսալի միջոցներ են պայմանագրում նշված երկկողմանի ընդունելի կապի միջոցները:

Գործարքի կնքման վայր կարող է լինել ինչպես բորսայական այնպես նաև արտաբորսայական շուկան:

Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված կամ դրանց արդյունքում ստացված Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Պահառության պայմանագրի և Պայմանագրի հավելված 2-ի համաձայն բացված և սպասարկվող արժեթղթերի հաշիվներում:


Արժեթղթերում ներդրումներ կատարելիս հաճախորդը առնչվում է մի շարք ռիսկերի հետ, որոնք տարբեր տեսակի արժեթղթերի համար տարբեր են:

Արժեթղթերին բնորոշ հիմնական ռիսկերն են՝

- Շուկայական ռիսկ
- Վարկային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Այլ ռիսկեր

Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթային, գնային, տոկոսադրույքի տատանման ռիսկերը:

Արտարժույթային ռիսկը ենթադրում է արտարժույթների փոխարժեքների տատանումից հնարավոր կորուստները:

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 4/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

Իրացվելիության ռիսկը ենթադրում է շուկայի ոչ իրացվելի լինելու հետևանքով արժեթղթերի առքվաճառքի գործարքների իրականացման անհնարինություն:

Տոկոսադրույքի ռիսկը շուկայում գործող տոկոսադրույքների փոփոխության հետևանքով առաջացող ռիսկն է:

Գնաճային ռիսկը գնաճային ճնշման ազդեցության հետևանքով առաջացող ռիսկն է, որի արդյունքում արժեթղթերում ներդրումներից ստացված եկամտի գնողունակությունն ընկնում է:

Ռիսկի այս տեսակները այն հիմնական ռիսկերն են, որոնք կարող են առաջանալ արժեթղթերում ներդրումներ կատարելիս:

Հնարավոր բոլոր ռիսկերը մանրամասնորեն ներկայացված են Բրոքերի կողմից հաճախորդին տրամադրվող Ռիսկերի հայտարարագրում: Ռիսկերի վերաբերյալ ցանկացած լրացուցիչ տեղեկատվության համար անհրաժեշտ է դիմել Ամերիաբանկ ՓԲԸ Բրոքերային բաժին:


ՌԻՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ Հաճախորդի հանձնարարությամբ և միջոցների հաշվին իրականացվող ներդրումների ՌԻՄԿԸ ԿՐՈՒՄ Է ՀԱՃԱԽՈՐԴԸ:

Բանկը ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել ընկերության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:

Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով: Բացառությամբ բանկերի կողմից թողարկված պարտատոմսերի, որոնք ձեռք են բերվել ֆիզիկական անձանց կողմից համաձայն <<Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին>> ՀՀօրենքի:

Բրոքերի խորհրդատվություն և Բրոքերի հետ հանդիպում կարող է տեղի ունենալ միայն Ամերիաբանկ ՓԲԸ Գլխամասային գրասենյակում՝ Վ. Սարգսյան 2, Կամար Բիզնես կենտրոն:

Ամփոփագրում ներկայացված պայմանները կարող են փոփոխվել ծառայությունների մատուցումը իրականացնող Բրոքերի կողմից, փոփոխված նոր պայմաններին կարող եք ծանոթանալ զանգահարելով +37410561111 հեռախոսահամարով կամ այցելելով Ամերիաբանկի պաշտոնական ինտերնետային կայքը

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 5/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

Ցանկացած դեպքում Բրոքերի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է Հանձնարարականների խախտմամբ գործարքներ կնքելու կամ համապատասխան իրավական հիմքերի բացակայության դեպքերում Հանձնարարականը չկատարելու դեպքերով՝ դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում նրան պատճառված իրական վնասի չափով:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանկի կողմից ներդրումային ծառայություններ մատուցելիս առաջացող հնարավոր շահերի բախումների տեսակները հետևյալն են՝

1) Հաճախորդի հետ արժեթղթերի առուվաճառքի գործարքների կնքում շուկայականից տարբերվող գներով՝ ի օգուտ ընկերության կամ դրա աշխատակցի և ի վնաս հաճախորդի,

2) Հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,


3) Հաճախորդին պատկանող միջոցների ներդրում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,

4) Հաճախորդի միջոցների հաշվին ավելորդ կամ վերջինիս շահերին չհամապատասխանող գործարքների իրականացում, որը նպատակ է հետապնդում մեծ ծավալներով միջնորդավճարների գանձում հաճախորդից,

5) Հաճախորդի կողմից տրամադրված ծառայողական տեղեկությունների օգտագործումը ի օգուտ Բանկի, Բանկի աշխատակցի կամ այլ փոխկապակցվախ անձի, ի վնաս հաճախորդի.

6) Արժեթղթերով այնպիսի գործարքների իրականացումը, որոնք կարող են լինել ի շահ մեկ հաճախորդի և ի վնաս մեկ այլ հաճախորդի,

2. Նշված հնարավոր շահերի բախումների ցանկը սպառիչ և ամբողջական չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել շահերի բախումների նաև այլ դեպքերով:

 AMERIABANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 6/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

3. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ

Շահերի հնարավոր բախումները կանխարգելելու նպատակով Բանկը կիրառում է հետևյալ միջոցառումները՝

1) Բանկի աշխատակիցը հաճախորդների գործարքները կնքում է հաճախորդի կողմից ներկայացված համապատասխան պատվերի հիման վրա՝ պատշաճ ձևակերպված,

2) Խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի շահերի վրա:

4. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Բանկը գործում է ելնելով բացառապես Հաճախորդի շահերի պաշտպանությունից: Այդ նպատակով բանկի համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

1) Պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, Բանկի ներքին կանոնները, ինչպես նաև աշխատանքային և մասնագիտական էթիկայի կանոնները,


2) Չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնք արդյունքում կհանգեցնեն վերջինից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացմանը,

3) Գործել ազնիվ և բարեխիղճ

5. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան Հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ ներդրումային ծառայության մատուցող անձի կողմից դրանց ստացման հաջորդականության:

6. Իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին գործարքներ իրականացնելիս Բանկը և համապատասխան աշխատակիցը պետք է.

1) Համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,

 AMERIBANK	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	14TRD SM 72-20-07	Էջ 7/11
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ		Խմբագրություն 1	
		Ուժի մեջ է՝ 13.07.2020թ.-ից	

2) Այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում

ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում,

3) Համապատասխան Հաճախորդի պատվերի առկայության դեպքում Բանկը խուսափում է պատվերի առարկա գործարքին նույնական գործարք իրականացնելուց նախքան Հաճախորդի պատվերի կատարումը

4) Հաճախորդին անհապաղ տեղիակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը: